ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

*ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

# *ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍԻՆ*

## ԹԻՎ 8

*ԵՐԵՎԱՆ – 2017*

## Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2017թ. հունվար-օգոստոսին

%

| Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆԴ) երկու նիշ մակարդակ | *2017թ.* | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվարը | փետրվարը | մարտը | ապրիլը | մայիսը | հունիսը | հուլիսը | օգոստոսը | *օգոստոսը* | | հունվար-օգոստոսը |
| | *նախորդ ամսվա նկատմամբ* | | | | | | | | 2016թ. դեկտեմբերի նկատմամբ | 2016թ. օգոստոսի նկատմամբ | 2016թ. հունվար-օգոստոսի նկատմամբ |
| **Սպառողական գների ինդեքս-ընդամենը** | **102.6** | **99.1** | **99.7** | **101.0** | **99.8** | **99.1** | **97.4** | **99.6** | **98.2** | **100.9** | **100.6** |
| *այդ թվում՝* | | | | | | | | | | | |
| Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք | 107.2 | 98.9 | 99.2 | 101.9 | 99.2 | 97.8 | 94.2 | 98.5 | 96.5 | 102.6 | 103.9 |
| Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ | 100.2 | 100.2 | 100.4 | 100.7 | 100.2 | 100.5 | 100.1 | 99.9 | 102.1 | 103.8 | 102.8 |
| Հագուստ և կոշիկ | 98.9 | 96.1 | 99.3 | 101.5 | 100.6 | 98.8 | 96.2 | 98.5 | 90.2 | 97.1 | 97.0 |
| Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ | 98.2 | 98.0 | 99.5 | 99.9 | 99.9 | 99.8 | 100.1 | 100.1 | 95.5 | 96.9 | 95.1 |
| Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն | 99.9 | 99.4 | 99.3 | 100.5 | 99.8 | 99.6 | 100.3 | 100.3 | 99.1 | 95.7 | 94.2 |
| Առողջապահություն | 100.0 | 99.8 | 100.7 | 100.3 | 100.0 | 100.1 | 100.1 | 100.8 | 101.8 | 101.0 | 99.7 |
| Տրանսպորտ | 99.6 | 101.3 | 101.1 | 101.1 | 101.4 | 101.1 | 100.3 | 102.6 | 108.7 | 106.1 | 100.9 |
| Կապ | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Հանգիստ և մշակույթ | 101.5 | 99.4 | 99.4 | 99.1 | 98.8 | 99.8 | 99.7 | 99.1 | 96.8 | 102.0 | 103.1 |
| Կրթություն | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 102.1 | 102.2 |
| Ռեստորաններ և հյուրանոցներ | 99.9 | 100.1 | 100.1 | 100.1 | 99.6 | 100.2 | 99.9 | 100.1 | 99.9 | 103.2 | 100.8 |
| Տարբեր ապրանքներ և ծառայություններ | 99.7 | 100.5 | 99.9 | 99.8 | 99.8 | 99.7 | 99.9 | 100.1 | 99.4 | 98.5 | 98.1 |

***Սպառողական գներ:*** 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 0.4% գնանկում, ինչը մեծապես պայմանավորվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 1.5% գնանկումով: Սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ) գները նշված ժամանակահատվածում նվազել են 1.4%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում և ծառայությունների ոլորտում գրանցվել է գների և սակագների՝ համապատասխանաբար 0.2% և 0.6% հավելաճ:

%

| | *2017թ.* | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվարը | փետրվարը | մարտը | ապրիլը | մայիսը | հունիսը | հուլիսը | օգոստոսը | *օգոստոսը* | | հունվար-օգոստոսը |
| | *նախորդ ամսվա նկատմամբ* | | | | | | | | 2016թ. դեկտեմբերի նկատմամբ | 2016թ. օգոստոսի նկատմամբ | 2016թ. հունվար-օգոստոսի նկատմամբ |
| **Սպառողական գների ինդեքս-ընդամենը** | **102.6** | **99.1** | **99.7** | **101.0** | **99.8** | **99.1** | **97.4** | **99.6** | **98.2** | **100.9** | **100.6** |
| *այդ թվում՝* | | | | | | | | | | | |
| Սպառման ապրանքներ | 104.3 | 99.0 | 99.5 | 101.3 | 99.5 | 98.5 | 96.1 | 99.1 | 97.3 | 101.1 | 101.7 |
| Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ) | 106.5 | 99.0 | 99.4 | 101.8 | 99.3 | 98.0 | 94.7 | 98.6 | 97.1 | 102.7 | 103.8 |
| Ոչ պարենային ապրանքներ | 99.6 | 99.1 | 99.8 | 100.3 | 99.9 | 99.6 | 99.2 | 100.2 | 97.9 | 98.2 | 97.1 |
| Ծառայություններ | 99.1 | 99.3 | 100.1 | 100.2 | 100.3 | 100.2 | 100.1 | 100.6 | 99.9 | 100.5 | 98.4 |

2017թ. օգոստոսին 2016թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 98.2%, այդ թվում, սննդամթերքինը և ոչ ալկոհոլային խմիչքինը (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ)՝ 97.1%, ոչ պարենային ապրանքներինը՝ 97.9%, ծառայությունների սակագներինը՝ 99.9%:

2017թ. հունվար-օգոստոսին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.2% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 0.5% նվազում):

**Սպառողական գների հավելաճը 2008-2017թթ. օգոստոսին**

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,%




2017թ. օգոստոսին 2016թ. օգոստոսի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100.9%, այդ թվում, սննդամթերքինը և ոչ ալկոհոլային խմիչքինը (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ)՝ 102.7%, ոչ պարենային ապրանքներինը՝ 98.2%, ծառայությունների սակագներինը՝ 100.5%, իսկ հունվար-օգոստոսին 2016թ. հունվար-օգոստոսի համեմատ՝ համապատասխանաբար 100.6%, 103.8%, 97.1% և 98.4%:

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ սպառողական գները նվազել են 0.7-0.1%-ով, այդ թվում, համեմատաբար բարձր գնանկում գրանցվել է ք. Հրազդանում: Մայրաքաղաքում սպառողական գները նվազել են 0.4%-ով:

***Սննդամթերքի գներ:*** 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի 1.7% գնանկում, ինչը հիմնականում պայմանավորվել է բանջարեղենի և մրգի ապրանքախմբերի՝ համապատասխանաբար 14.4% և 6.6% գնանկումով:

Բանջարեղենի ապրանքախմբում[1] 2017թ. օգոստոսին 2016թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 2.9%, իսկ 2017թ. հուլիսի համեմատ՝ 14.4% գնանկում:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ բանջարեղենի գները նվազել են 20.1-9.0%-ով, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում: Մայրաքաղաքում բանջարեղենի գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ նվազել է 14.7%-ով:

[1] *2017թ. հուլիս-օգոստոսին 2016թ. հուլիս և օգոստոս ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների տոկոսային փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:*

**Բանջարեղենի գների փոփոխությունները 2015-2017թթ. հունվար-օգոստոսին**

նախորդ ամսվա նկատմամբ, %



| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2015 | 15.5 | -2.1 | -2.8 | -6.1 | -8.6 | -30.9 | -10.7 | 118 |
| 2016 | 33.3 | -13.4 | -17 | -4.3 | -7.1 | -18.3 | -20.9 | -8.5 |
| 2017 | 48.4 | -5.6 | -7.1 | 8.0 | -5.3 | -25.4 | -311 | -14.4 |

Մրգի ապրանքախմբում[1] 2017թ. օգոստոսին 2016թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 11.0% գնաճ, իսկ 2017թ. հուլիսի համեմատ՝ 6.6% գնանկում:

**Մրգի գների փոփոխությունները 2015-2017թթ. հունվար-օգոստոսին**

նախորդ ամսվա նկատմամբ, %



| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2015 | 9.1 | -3.7 | 4.1 | 3.3 | 3.9 | 13.3 | -29.1 | -5.1 |
| 2016 | 8.7 | -3.3 | -0.5 | 4.7 | 3.4 | 27.4 | -19.4 | -5.2 |
| 2017 | 9.9 | -13 | 2.0 | 3.4 | -0.5 | 23.1 | -20.0 | -6.6 |

Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ մրգի գները նվազել են 10.6-0.7%-ով (գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել ք. Իջևանում), իսկ մեկում գրանցվել է 2.8% գնաճ: Մայրաքաղաքում մրգի գները նվազել են 7.5%-ով:

Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2017թ. օգոստոսին 2016թ. օգոստոսի համեմատ գրանցվել է 13.4% գնաճ, իսկ 2017թ. հուլիսի համեմատ՝ 0.2% գնանկում: Հանրապետության դիտարկված 4 քաղաքներում 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ արձանագրվել է շաքարի և շաքարավազի 1.3-0.7% գնանկում, 6-ում՝ 0.2-0.8% գնաճ, իսկ մայրաքաղաքում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է հացաբուլկեղենի և ձավարեղենի, ալկոհոլային խմիչքի և ծխախոտի 0.1% գնանկում, իսկ ձկան և ծովամթերքի ապրանքախմբում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Սամթերքի ապրանքախմբում 2017թ. օգոստոսին 2016թ. օգոստոսի համեմատ գրանցվել է 6.1%, իսկ 2017թ. հուլիսի համեմատ 1.4% գնաճ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ մսամթերքի գներն աճել են 0.2-1.9%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Գյում-

րիում: Մայրաքաղաքում մսամթերքի գներն աճել են 1.7%-ով:

Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2017թ. օգոստոսին 2016թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 5.9%, իսկ 2017թ. հուլիսի համեմատ՝ 0.9% գնաճ (պայմանավորված կարագի 2.7% գնաճով):

Կաթնամթերքի, պանրի և ձվի ապրանքախմբում 2017թ. օգոստոսին 2016թ. օգոստոսի համեմատ արձանագրվել է 1.4% գնանկում, իսկ 2017թ. հուլիսի համեմատ՝ 0.1% գնաճ (այդ թվում, ձվի գինը նվազել է 0.7%-ով):

2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է հրուշակեղենի՝ 0.4%, ոչ ալկոհոլային խմիչքի՝ 0.4%, սուրճի, թեյի և կակաոյի 0.5% գնաճ:

***Ոչ պարենային ապրանքների գներ:*** 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.2% գնաճ:

2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գները մնացել են անփոփոխ: 2017թ. օգոստոսին 2016թ. օգոստոսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի 1.2% գնանկում և դիզելային վառելիքի 7.3% գնաճ, իսկ 2016թ. դեկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 10.3% և 13.8% գնաճ:

**Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունները 2013-2017թթ.**

2010թ. նկատմամբ, %




Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.6% գնաճ, մեկում՝ 0.1% գնանկում, իսկ 2-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.1%-ով:

***Ծառայությունների սակագներ:*** Մատուցված ծառայությունների ոլորտում 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սակագների 0.6% հավելաճ, ինչը մեծապես պայմանավորվել է տրանսպորտի ծառայությունների սակագների 2.6% հավելաճով (կապված օդային տրանսպորտով միջազգային չվերթների ծառայությունների սակագների 14.5% հավելաճի հետ): Բնակարանային ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում աճել են 0.1%-ով, հյուրանոցային ծառայություններինը՝ 0.9%-ով: Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է հանգստի և մշակույթի ծառայությունների սակագների 0.9% նվազում, իսկ առողջապահության, կապի և կրթության ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ արձանագրվել է ծառայությունների սակագների 0.5-0.9% հավելաճ, այդ թվում, համեմատաբար բարձր հավելաճ գրանցվել է ք. Գյումրիում: Մայրաքաղաքում ծառայությունների սակագներն աճել են 0.5%-ով:

**ՀՀ սպառողական շուկայում սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2017թ. հունվար-օգոստոսին**

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,%



| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք (ներառյալ ալկոհոլային խմիչք, ծխախոտ) | 6.5 | 5.5 | 4.8 | 6.7 | 5.9 | 3.9 | -1.6 | -2.9 |
| Ոչ պարենային ապրանքներ | -0.4 | -1.2 | -1.4 | -1.1 | -1.1 | -1.6 | -2.3 | -2.1 |
| Ծառայություններ | -0.9 | -1.6 | -1.5 | -1.3 | -1.0 | -0.8 | -0.7 | -0.1 |
| Սպառողական գների ինդեքս | 2.6 | 1.7 | 1.4 | 2.4 | 2.1 | 1.2 | -1.4 | -1.8 |

*Արտարժույթի շուկա:* 2017թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետության սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 0.4% և 0.1% նվազում (ՀՀ դրամն արժևորվել է): 2017թ. օգոստոսին 2016թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի նվազումը կազմել է 1.8% և 0.9%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հանրապետության սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 3.8% և 1.5% նվազում: 2017թ. օգոստոսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 478.6 դրամ, ինչը 0.7%-ով գերազանցել է 2016թ. օգոստոսի համապատասխան ցուցանիշը (475.4 դրամ):

**ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2016-2017թթ. հունվար-օգոստոսին**

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,%



*Հավելված 1*

**Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների ինդեքսները ՀՀ-ում**
**2017թ. հուլիս-օգոստոսին**

%

| | *2017թ.* | | | |
|---|---|---|---|---|
| | *Հուլիսը* | | *Օգոստոսը* | |
| | 2017թ. հունիսի նկատմամբ | 2016թ. հուլիսի նկատմամբ | 2017թ. հուլիսի նկատմամբ | 2016թ. օգոստոսի նկատմամբ |
| ***Միրգ, ընդամենը*** | ***80.0*** | ***112.7*** | 93.4 | 111.0 |
| *այդ թվում՝* | | | | |
| Խնձոր | 85.3 | 108.0 | 78.3 | 110.5 |
| Տանձ | 92.5 | 146.4 | 82.9 | 143.3 |
| Ծիրան | 32.3 | 78.9 | 164.7 | 91.5 |
| Դեղձ | 54.4 | 119.1 | 75.4 | 121.4 |
| Սալոր | 61.5 | 89.5 | 86.3 | 96.5 |
| Աղամաթուզ (բանան) | 96.1 | 86.8 | 98.1 | 85.2 |
| Նարինջ | 118.4 | 122.3 | 132.0 | 132.7 |
| Կիտրոն | 104.1 | 85.9 | 100.5 | 81.3 |
| Ձմերուկ | 46.6 | 127.5 | 42.8 | 71.0 |
| Սեխ | 58.7 | 90.7 | 45.0 | 62.2 |
| Ելակ | 134.0 | 112.6 | 96.6 | 122.9 |
| ***Բանջարեղեն և կարտոֆիլ, ընդամենը*** | ***68.9*** | ***103.8*** | 85.6 | 97.1 |
| *այդ թվում՝* | | | | |
| Կաղամբ | 62.4 | 123.5 | 54.8 | 66.4 |
| Ծաղկակաղամբ | 67.5 | 90.7 | 78.3 | 110.3 |
| Կանաչ սոխ | 116.1 | 117.9 | 124.6 | 150.7 |
| Խառը կանաչեղեն | 85.4 | 70.7 | 109.1 | 79.0 |
| Լոլիկ | 66.3 | 157.1 | 53.3 | 112.7 |
| Վարունգ | 92.4 | 29.2 | 177.0 | 55.5 |
| Սմբուկ | 21.3 | 87.5 | 39.5 | 93.2 |
| Պղպեղ | 47.1 | 137.3 | 71.7 | 119.1 |
| Կանաչ լոբի | 51.2 | 79.4 | 110.3 | 81.9 |
| Գազար | 79.7 | 104.9 | 74.0 | 77.1 |
| Ճակնդեղ | 64.1 | 53.9 | 85.0 | 54.6 |
| Գլուխ սոխ | 96.3 | 98.4 | 84.6 | 91.7 |
| Սխտոր | 104.1 | 111.7 | 112.7 | 132.1 |
| Սունկ | 96.2 | 109.9 | 102.1 | 111.0 |
| Կարտոֆիլ | 61.3 | 84.4 | 90.8 | 82.6 |

*Հավելված 2*

***Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում***[1]

*%*

| | 2016 թ. դեկտեմբերը 2015թ. դեկտեմբերի նկատմամբ | **2017թ.** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հուն-վարը | փետր-վարը | մար-տը | ապ-րիլը | մա-յիսը | հու-նիսը | հու-լիսը | հուլիսը 2016թ. դեկտեմբերի նկատմամբ |
| | | *նախորդ ամսվա նկատմամբ* | | | | | | | |
| Ավստրիա | 101.6 | 99.4 | 100.2 | 100.8 | 100.3 | 99.9 | 99.9 | 99.4 | 99.9 |
| Բելգիա | 102.2 | 99.1 | 101.9 | 100.0 | 100.3 | 99.7 | 99.9 | 99.2 | 100.2 |
| Բուլղարիա | 99.5 | 100.7 | 100.0 | 99.5 | 100.5 | 99.8 | 99.8 | 100.5 | 100.8 |
| Հունգարիա | 101.8 | 100.4 | 100.3 | 100.0 | 100.4 | 100.2 | 100.1 | 100.1 | 101.4 |
| Գերմանիա | 101.7 | 99.2 | 100.7 | 100.1 | 100.0 | 99.8 | 100.2 | 100.4 | 100.4 |
| Հունաստան | 100.3 | 99.5 | 99.9 | 101.4 | 100.7 | 99.8 | 100.7 | 98.8 | 100.8 |
| Դանիա | 100.3 | 99.9 | 100.7 | 100.1 | 100.3 | 99.9 | 99.8 | 101.0 | 101.7 |
| Իռլանդիա | … | 99.5 | 100.5 | 100.6 | 100.4 | 99.8 | 100.1 | 100.1 | 101.0 |
| Իսպանիա | 101.4 | 99.0 | 99.7 | 101.1 | 100.9 | 100.0 | 100.1 | 98.8 | 99.5 |
| Իտալիա | 100.5 | 98.3 | 100.2 | 101.9 | 100.8 | 99.9 | 99.8 | 98.1 | 99.0 |
| Կիպրոս | 100.1 | 99.2 | 100.1 | 100.9 | 101.0 | 100.1 | 100.3 | 100.0 | 101.5 |
| Լատվիա | 102.1 | 100.1 | 100.4 | 100.9 | 100.4 | 100.2 | 100.4 | 99.2 | 101.6 |
| Լիտվա | 102.0 | 100.2 | 100.3 | 101.1 | 101.0 | 99.8 | 100.2 | 99.8 | 102.5 |
| Լյուքսեմբուրգ | 101.6 | 99.4 | 101.5 | 99.9 | 100.2 | 99.9 | 100.0 | 99.1 | 99.9 |
| Մալթա | 101.0 | 98.9 | 100.4 | 100.9 | 102.6 | 101.0 | 101.0 | 100.1 | 105.0 |
| Նիդերլանդներ | 100.7 | 99.4 | 100.9 | 100.4 | 100.9 | 99.6 | 99.7 | 100.8 | 101.7 |
| Լեհաստան | 100.9 | 100.3 | 100.5 | 100.0 | 100.3 | 99.9 | 99.9 | 99.8 | 100.7 |
| Պորտուգալիա | 100.9 | 99.3 | 99.8 | 102.0 | 101.5 | 99.7 | 99.5 | 99.4 | 101.1 |
| Ռումինիա | 99.9 | 99.9 | 99.9 | 100.1 | 100.2 | 100.2 | 99.9 | 100.0 | 100.2 |
| Սլովակիա | 100.2 | 100.3 | 100.5 | 99.9 | 100.1 | 100.3 | 100.0 | 100.0 | 101.1 |
| Սլովենիա | 100.6 | 99.6 | 101.0 | 100.3 | 100.0 | 100.7 | 99.9 | 99.4 | 100.8 |
| Միացյալ Թագավորություն | 101.6 | 99.5 | 100.7 | 100.4 | 100.5 | 100.3 | 100.0 | 99.9 | 101.3 |
| Ֆինլանդիա | 101.1 | 99.3 | 100.7 | 100.0 | 100.4 | 99.8 | 100.0 | 99.6 | 99.9 |
| Ֆրանսիա | 100.8 | 99.7 | 100.2 | 100.7 | 100.1 | 100.0 | 100.0 | 99.6 | 100.3 |
| Խորվաթիա | 100.7 | 99.8 | 100.2 | 100.2 | 100.7 | 99.9 | 100.4 | 100.1 | 101.3 |
| Չեխիայի Հանրապետություն | 102.1 | 100.8 | 100.4 | 100.0 | 100.1 | 100.2 | 100.0 | 100.4 | 101.9 |
| Շվեդիա | 101.7 | 99.2 | 100.7 | 100.0 | 100.6 | 100.0 | 100.1 | 100.6 | 101.3 |
| Էստոնիա | 102.4 | 100.3 | 101.4 | 100.4 | 100.6 | 100.3 | 100.1 | 100.8 | 104.0 |
| ***Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-28)***[2] | ***101.2*** | ***99.4*** | ***100.4*** | ***100.6*** | ***100.4*** | ***100.0*** | ***100.0*** | ***99.7*** | ***100.4*** |
| ***Հայաստան*** | ***98.9*** | ***102.6*** | ***99.1*** | ***99.7*** | ***101.0*** | ***99.8*** | ***99.1*** | ***97.4*** | ***98.6*** |
| Ռուսաստան | 105.4 | 100.6 | 100.2 | 100.1 | 100.3 | 100.4 | 100.6 | 100.1 | 102.4 |
| Բելառուս | 110.6 | 100.9 | 100.5 | 100.3 | 100.7 | 100.3 | 100.7 | 99.9 | 103.3 |
| Ուկրաինա | 112.4 | 101.1 | 101.0 | 101.8 | 100.9 | 101.3 | 101.6 | 100.2 | 108.2 |
| Ղազախստան | 108.5 | 100.8 | 101.0 | 100.5 | 100.5 | 100.5 | 100.4 | 100.1 | 103.8 |
| Ղրղզստան | 99.5 | 101.0 | 100.6 | 100.5 | 100.1 | 100.1 | 100.4 | 99.0 | 101.8 |
| Մոլդովա | 102.4 | 101.2 | 101.2 | 100.4 | 101.4 | 100.9 | 99.6 | 99.1 | 103.8 |
| Տաջիկստան | 106.1 | 100.6 | 101.1 | 101.5 | 101.2 | 100.7 | 100.6 | 100.4 | . . . |
| Վրաստան | 101.8 | 102.9 | 101.7 | 99.5 | 100.1 | 100.0 | 99.6 | 99.1 | 103.0 |
| Կանադա | 101.5 | 100.9 | 100.2 | 100.2 | 100.4 | 100.1 | 99.9 | 100.0 | 101.6 |
| Նորվեգիա | 103.8 | 99.6 | 100.5 | 100.4 | 100.1 | 100.3 | 100.4 | 100.2 | 101.4 |
| Բրազիլիա | 106.3 | 100.4 | 100.3 | 100.2 | 100.1 | 100.3 | 99.8 | 100.2 | 101.4 |
| Կորեայի Հանրապետություն | 101.3 | 100.9 | 100.3 | 100.0 | 99.9 | 100.1 | 99.9 | 100.2 | 101.3 |
| Չինաստան | 102.1 | 101.0 | 99.8 | 99.7 | 100.1 | 99.9 | 99.8 | 100.1 | 100.5 |
| ԱՄՆ | 102.1 | 100.6 | 100.3 | 100.1 | 100.3 | 100.1 | 100.1 | 99.9 | 101.4 |
| Թուրքիա | 108.5 | 102.5 | 100.8 | 101.0 | 101.3 | 100.4 | 99.7 | 100.1 | 106.0 |
| Շվեյցարիա | 99.8 | 99.8 | 100.6 | 100.1 | 100.5 | 99.8 | 100.0 | 100.1 | 100.9 |
| Ճապոնիա | 100.3 | 99.8 | 99.9 | 100.1 | 100.4 | 100.1 | 99.9 | … | … |

. . . - Տվյալները բացակայում են:

1 Տեղեկատվությունը պատրաստվել է Եվրոստատի, ազգային վիճակագրական ծառայությունների կայք էջերում, ինչպես նաև ԱՄՀ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտների պահանջներին համապատասխան ԱՄՀ-ի կայք էջում զետեղված ցուցանիշների հիման վրա:

2 Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«**Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2017թ. հունվար-սեպտեմբերին** մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2017 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի», նախատեսված է 2017թ. հոկտեմբեր ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-301, Հավելված 3, էջ 67):